

14022



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



« 09 » 04 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 042 - 24

Ձեռնարկողը՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

«Կոպայք-3» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ուղղմամբ համակարգողական
գնահատման հաշվետվություն
Կոպայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Էսաչիկ Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ №

« _____ » _____ 2024թ.

**«ԿՈՏԱՅՔ-3» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական
պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության
նազմավարական գնահատման հաշվեկտվություն**

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Նախագծային փաստաթղթեր, ՇՄԱՌԳ հաշվեկտվություն
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ

Ներածական մաս. «ԿՈՏԱՅՔ-3» տարածաշրջանի միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը (այսուհետ ՄՄՀՏՊՓ) ներառում է Բյուրեղավան խոշորացված համայնքի տարածքը՝ Բյուրեղավան, Նուռնուս և Ջրաբեր բնակավայրերը:

Նախագծային փաստաթուղթը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է հիմնադրության փաստաթուղթ:

Նկարագրական մաս. «ԿՈՏԱՅՔ-3» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է միկրոռեզիոնալ միավորի սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ՝ կանոնակարգելով ինչպես տեղական, այնպես էլ միկրոռեզիոնում ներառված տարածքների տարածական զարգացման խնդիրները: Հիմնական նպատակն է մշակել միկրոռեզիոնում ներառված համայնքների (բնակավայրերի) տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթուղթ, որը ներառում է համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտումն ու վերլուծությունը, առաջնային խնդիրների ձևակերպումը, համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների առաջադրումը, քաղաքաշինական, շրջակա միջավայրի պահպանման, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու ձևակերպումը:

Միկրոռեզիոնում ներառված բնակավայրերի վարչական տարածքը կազմում է 2452,83 հա., որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1296.76 հա, բնակավայրերի հողերը՝ 517,08 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 215.10 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 52,48 հա, հատուկ պահպանվող



տարածքները՝ 45,06 հա, անտառային հողերը 319,53 հա, ջրային հողերը՝ 6,82 հա:

«Կոտայք-3» միկրոռեզիդենցիոն ընդգրկված բնակչության թիվը 2022 թվականին կազմել է 12230 մարդ, որից Բյուրեղավան քաղաքի բնակչության թիվը՝ 11040 անձ, Ջրաբերինը՝ 450, Նուռնուսինը՝ 740: Հեռանկարում «Կոտայք-3» միկրոռեզիդենցիոն ընդգրկված բնակչության թիվը կկազմի 13,45 հազ. մարդ:

Բյուրեղավան բնակավայրը զբաղեցնում է 382,95 հա տարածք, տեղակայված է Հրազդան քաղաքից 35 կմ, Երևանից 20 կմ հեռավորության վրա: Բյուրեղավան բնակավայրում բնակավայրերի հողերը կազմում են 243.54 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 111.42 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը 14.85 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը 5.52 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը 6.1 հա, ջրային հողերը կազմում են 1.46 հա: Անտառային, պահուստային և հատուկ նշանակության հողերը բացակայում են: Հեռանկարում բնակավայրերի հողերը կկազմեն 206.296 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 117.895 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը 27.54 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը 24.725 հա: Հատուկ պահպանվող տարածքների հողերի ու ջրային հողերի փոփոխություն չի սպասվում: Բնակավայրում ներկայումս զարգանում են առևտրի և սպասարկման ոլորտները: Նախկինում Բյուրեղավանում գործում էին շուրջ 16 արտադրական ձեռնարկություններ, որոնք այժմ չեն գործում կամ գործում են իրենց հզորությունների չնչին ծավալով:

Արտադրության մեջ գործունեություն ծավալող շուրջ երկու տասնյակ ընկերություններ զբաղվում են երկաթբետոնե շինվածքների, ապակյա տարաների, կրի, գիպսի, գաջի, ակրոհոլային խմիչքների, ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ:

Բյուրեղավանի «Արզնի» հանքային ջրերի աղբյուրներն ունեն 15 լ/վրկ ելք: Ստորգետնյա ջրերը՝ մինչև 15.0 մետր խորությամբ հորատանցքերով, չեն բացահայտվել:

Բյուրեղավան քաղաքի ոռոգման ջրի աղբյուրը Կոտայքի ջրանցքն է, որը մետաղական խողովակաշարով, ինքնահոս կերպով մատակարարվում է 86.4 հազ. խմ քանակով: Կոյուղատարը կառուցված է 40-45 տարի առաջ, հաճախակի վթարվում է և խցանվում:

Նուռնուս բնակավայրը զբաղեցնում է 1457,01 հա տարածք, գտնվում է Երևանից 27 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: Բնակավայրերի հողերը կազմում են 238.56 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 27,16 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 26.16 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 19.9 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 829.59 հա, անտառային հողերը 311.82 հա, ջրային հողերը՝ են 3.82 հա. պահուստային և հատուկ նշանակության հողերը բացակայում են: Հեռանկարում բնակավայրերի հողերը կկազմեն 260.64 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը 27.51 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը 26.16 հա գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 807.16 հա, հատուկ պահպանվող տարածքների, անտառային ու ջրային հողերի փոփոխություն չի սպասվում: Բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունը, անասնապահությունն ու մեղվաբուծությունն է:

Տարածքում գրունտային ջրերը տեղադրված են 25 մ-ից ավել խորության վրա: Գտնվում են սելավային պրոցեսներ, որոնք դրսևորվում են գյուղի հյուսիսային մասում: Առկա ջրի ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարվում է բնակավայրի շուրջ 10%-ը: Երկու գեղեզանոցներն անմիջապես մոտ են բնակելի և հասարակական կառուցապատման տարածքին:



Գյուղի (նախկին համայնքի) տարածքում կան դիատոմիտի և բազալտի պաշարներ:

Նուռնուս գյուղի ոռոգման ջրի աղբյուր են հանդիսանում Կոտայքի ջրանցքն ու Գյումուշի ՀԷԿ-ը, որը մետաղական խողովակաշարով, ինքնահոս կերպով մատակարարվում է 432.5 հազ. խմ քանակով:

Ջրաբեր բնակավայրը զբաղեցնում է 612,87 հա տարածք, գտնվում է Գուրթանասարի արևմտյան ստորոտին, Երևանից 28 կմ հեռավորության վրա:

Բնակավայրերի հողերը կազմում են 34.98 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը՝ 70,06 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը 11.47 հա, հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 19.64 հա, գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 467.47 հա, անտառային հողերը 7.71 հա, ջրային հողերը 1.54 հա: Պահուստային և հատուկ նշանակության հողերը բացակայում են: Հեռանկարում բնակավայրերի հողերը կկազմեն 44.33 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը՝ 74.33 հա, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 16.13 հա գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 449.19 հա: Հատուկ պահպանվող տարածքների, անտառային ու ջրային հողերի փոփոխություն չի սպասվում:

«ԿՈՏԱՅՔ-3» ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ				
Ցուցանիշը	Չափման միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային
1	2	3	4	5
1. ՏԱՐԱԾՔԸ				
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	2452.83	2452.83	2452.83
բնակավայրերի հողեր,	հա	517.08	493.736	511.266
<i>որից՝</i>				
բնակելի կառուցապատման	հա	230.41	293.587	317.937
հասարակական կառուցապատման	հա	23.89	28.648	29.949
խառը կառուցապատման	հա	3.81	3.956	3.956
ընդհանուր օգտագործման,	հա	87.61	66.810	67.799
այլ հողեր	հա	171.36	100.735	91.625



արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր,	հա	208.64	215.465	219.735
<i>որից՝</i>				
արդյունաբերական օբյեկտների	հա	105.81	112.396	112.396
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	11.31	11.549	11.549
պահեստարանների	հա	4.99	4.99	4.99
ընդերքի օգտագործման	հա	86.53	86.53	90.80
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր,	հա	52.48	66.804	69.344
<i>որից՝</i>				
էներգետիկայի	հա	7.14	7.82	7.82
կապի	հա	0.13	0.13	0.13
տրանսպորտի	հա	40.95	40.95	40.95
կոմունալ ենթակառուցվածքների	հա	4.26	17.904	20.444
հատուկ պահպանվող տարածքների հողեր,	հա	45.06	45.06	45.06
<i>որից՝</i>				
բնապահպանական	հա	0.00	0.00	0.00
առողջարարական նպատակներով նախատեսված	հա	0.00	0.00	0.00
հանգստի համար նախատեսված	հա	0.00	0.00	0.00
պատմական և մշակութային	հա	45.06	45.06	45.06
հատուկ նշանակության	հա	0.00	0.00	0.00
գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	1303.22	1305.415	1281.075
<i>որից՝</i>				
վարելահող	հա	388.65	381.436	380.946
բազմամյա տնկարկներ	հա	28.80	57.372	57.372
խոտհարքներ	հա	0.00	0.00	0.00
արոտավայրեր	հա	483.89	381.730	348.890
այլ հողատեսքեր	հա	401.88	484.877	493.867



անտառային հողեր	հա	319.53	319.53	319.53
ջրային հողեր	հա	6.82	6.82	6.82
գետեր	հա	2.45	2.45	2.45
ջրամբարներ	հա	0.00	0.00	0.00
լճեր	հա	0.00	0.00	0.00
ջրանցքներ	հա	2.91	2.91	2.91
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	1.46	1.46	1.46
պահուստային հողեր	հա	0.00	0.00	0.00

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ: Գերեզմանոցը բնակելի մասից հեռու է 330 մ: Գրունտային ջրերը տեղադրված են 60 մ-ից ավել խորության վրա: Ջրամատակարարումն իրականացվում է Նուռնուսի ջրաղբյուրից: Ջրաբեր գյուղի ոռոգման ջրի աղբյուրը նույնպես Կոտայքի ջրանցքն է, որը մետաղական խողովակաշարով, ինքնահոս կերպով մատակարարվում է 162.1 հազ.խմ քանակով:

Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերում հեռանկարում նախատեսվում է ոռոգման համակարգերի գույքագրում, նորոգում, պահպանում և շահագործում, ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակարարման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, կաթիլային ոռոգման համակարգերի կիրառում, ջրամբարների կառուցում, համայնքներում ոռոգման ջրերի վերաբերյալ առկա խնդիրների վերանայում:

«Կոտայք-3» միկրոռեգիոնում ընդգրկված բնակավայրերում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար, գյուղական համայնքներում առաջարկվում է տեղադրել տարբեր արտադրողականության կենսաբանական մաքրման կայան:

Բնակավայրերում ջերմամատակարարումը հիմնականում իրականացվում է ներտնային, ներբնակարանային ջեռուցմամբ, մեծամասամբ գազի վառելիքային սարքերով, որոշ դեպքերում օգտագործվում են նաև այլ վառելանյութեր:

«Կոտայք-3» միկրոռեգիոնում ընդգրկված բոլոր միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհներն ասֆալտապատ են:

Ներկա դրությամբ գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկները (զբոսայգիներ, պուրակներ) բացակայում են:

Նուռնուսի բազալտից բացի, մյուս բնակավայրերում արդյունահանվում է լիթոիդային պեմզա:

Հեռանկարում նախատեսվում է ջրային ռեսուրսների առավել արդյունավետ և նպատակաուղղված կառավարում, կեղտաջրերի մաքրման ու մշակման աշխատանքների կազմակերպում, անտառային ռեսուրսների, հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարում, պահպանություն, վերարտադրություն և արդյունավետ օգտագործում, մարզի առողջարանների, հանգստյան տների, հանգստի գոտիների, զբոսաշրջային երթուղիների տարածքներում առկա ջրային ավազանների մաքրության ապահովում, հանգստյան տներից դուրս եկող կեղտաջրերի մաքրման աշխատանքների իրականացում, ժամանակակից լոկալ մաքրման կայանների կառուցում: Մարզում աղբահանության բնագավառում կարևորվում է աղբի պատշաճ հավաքումը, ինչպես նաև աղբի քանակի նվազեցմանը, վերաօգտագործմանը, օգտահանմանը, վերամշակմանն ու վերականգնմանն ուղղված մեխանիզմների ներդրումը:



Մարզում նախատեսված է կենտրոնացված աղբավայրի կառուցում: 2016 թվականից իրականացման փուլում է գտնվում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ համապատասխան չափանիշների ստանդարտներին համապատասխան սանիտարական աղբավայր և ներդնել աղբահանության արդյունավետ համակարգ:

Համայնքի և բնակավայրերի առաջընթացի ապահովման և զարգացման հիմնական գործոնը գյուղատնտեսական նշանակության հողերով ապահովվածությունն է, կարևոր են նաև համայնքում գյուղատնտեսական արտադրամիջոցներով ապահովվածությունը և տեխնիկական զինվածությունը: Զարգացման ուղղվածությունը ագրոմշակույթի մակարդակի բարձրացումն է, ոռոգման ջրի խնայողաբար, արդյունավետ և համաչափ օգտագործումը, մշակաբույսերի պաշտպանությունը ցրտահարություններից և կարկտահարումից, գյուղացիական տնտեսությունների խոշորացումը:

«Կոտայք-3» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքների տարածքներում գեոքիմիական գնահատման արդյունքները ցույց են տվել, որ հողերն աղտոտված չեն ծանր մետաղներով: Հեռանկարում նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ «Կոտայք-3» տարածական պլանավորման նախագծի շրջանակներում արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը չի նախատեսվում:

Առանձնահատուկ կարևորվում է օրգանական և էկոլոգիական գյուղատնտեսությունը, ինչը բացառում է տոքսիկ պարարտանյութերի՝ պեստիցիդների, քիմիական պարարտանյութերի կիրառումը: Դրանց փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ): Հեռանկարային զարգացման համար հիմնական խթանիչ գործոն են հանդիսանում գործող հզորությունների տեխնոլոգիական գործընթացի արդիականացումը և էներգախնայող համակարգերի կիրառումը:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից ներկայումս կազմում է 278,78 տ/տարի: Ներկա իրավիճակում արդյունաբերական արտանետումները կազմում են 80,52 տ/տարի, իսկ հեռանկարում բնակչության աճի հետ մեկտեղ արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 8,052 տ/տարով:

Ջեռուցման ժամանակ վնասակար արտանետումները ներկայումս կազմում են 132,09 տ/տարի, իսկ հնարավոր աճի դեպքում արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 13,209 տ/տարով: Ավտոտրանսպորտի արտանետումները ներկայումս կազմում են 66,17տ/տարի, իսկ հնարավոր աճի դեպքում արտանետումների ընդհանուր քանակը կավելանա ևս 6,617 տ/տարով:

Միկրոռեգիոնում ներառված այն բնակավայրերի հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով, նախատեսված է գերեզմանոցների պարսպապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը: Գերեզմանատների համար ՍՊԳ-ն ընդունված է 300մ:

Աղբահավաք վայրերի համար ինչպես նաև օրգանական ծագման թափոնների վարակազերծման և թաղման վայրերի, կենսաբանական մաքրման կայանի ՍՊԳ-ների ընդունված է 300 մ:



Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Կոտայքի մարզի պետական ցուցակը ներառում է 3208 հուշարձան:

«Կոտայք-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի գործունեության ընթացքում առաջարկվում է իրականացնել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված մշտադիտարկում (մոնիթորինգ) և գործողությունների ծրագիր.

- «Կոտայք-3»-ի բնակչության աճի՝ տարեկան մեկ անգամ,
- ներդրումային ծրագրերի՝ գործընթացի ամբողջ ընթացքում,
- տրանսֆորմացիայի ենթակա հողերի՝ նախատեսված ժամանակահատվածներում,
- աղբահանության համակարգի ռազմավարության(հող, ջուր, օդ)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- գործող գերեզմանոցների սանիտարական նորմերի բարելավման՝ կանաչապատ գոտու հիմնում ամբողջ եզրագծով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ենթակառուցվածքների զարգացման՝ գործընթացի ամբողջ ընթացքում,
- կենսաբազմազանության ուսումնասիրության՝ մինչև նախագծերի իրականացումը,
- անտառների և կանաչապատ տարածքների՝ գործընթացի ամբողջ ընթացքում:

Փորձաքննական պահանջներ

Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված «ԿՈՏԱՅՔ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ

Գոհար Մինասյան

